

ՏԱՂ ՍՐԲՈՅ ԽԱԶԻՆ

Մաշն ՚ի նախնումն երեւեցաւ ծաղկեալ ՚ի դրախտն աստուածատունկ,
Միսիթարիչ եղեալ Սեթեաւ նախագուշակ հօրն Ագամայ:
Մեք ՚ի յայն փայտն եմք յուսացեալ՝ յոր Տէր Յիսուս բեւեռեցաւ,
Եւ խոնարհեալ երկրպագեմք աստուածընկալ սուրբ նշանին:

(8)

Ի յերորդումն երեւեցաւ մեծի Կոյի նահապեաին:
Առեալ հրաման կազմել տապան խաչանըման օրինակեր:
Մեք ՚ի յայն փայտն եմք յուսացեալ՝ յոր Տէր Յիսուս բեւեռեցաւ,
Եւ խոնարհեալ երկրպագեմք աստուածընկալ սուրբ նշանին:

Ի չորրորդումն երեւեցաւ Աբրահամու հօրն արգարոյ,
Որ փախանակ խահակոյ խոյն կախեցաւ ՚ի Յարեկայ:
Մեք ՚ի յայն փայտն եմք յուսացեալ՝ յոր Տէր Յիսուս բեւեռեցաւ,
Եւ խոնարհեալ երկրպագեմք աստուածընկալ սուրբ նշանին:

Ի հինգ դարուն երեւեցաւ Խաչն Յակոբայ Խարայելին,
Սանդուխը կանգնեալ էր լուսեղէն որ հասանէր յերկինս վերին:
Մեք ՚ի յայն փայտն եմք յուսացեալ՝ յոր Տէր Յիսուս բեւեռեցաւ,
Եւ խոնարհեալ երկրպագեմք աստուածընկալ սուրբ նշանին:

Ի վեց դարուն երեւեցաւ Խաչն ՚ի ձեռինըն Մովսեսի,
Հարկանելով զծովն կարմիր առաջնորդ էր Խարայելի:
Մեք ՚ի յայն փայտն եմք յուսացեալ՝ յոր Տէր Յիսուս բեւեռեցաւ,
Եւ խոնարհեալ երկրպագեմք աստուածընկալ սուրբ նշանին:

Ի յեւթներորդն երեւեցաւ Ամբակումայ մարդարեին,
Ի մէջ երկուց աւաղակաց կոյր ՚ի Խաչին անմահն Աստուած:
Մեք ՚ի յայն փայտն եմք յուսացեալ՝ յոր Տէր Յիսուս բեւեռեցաւ,
Եւ խոնարհեալ երկրպագեմք աստուածընկալ սուրբ նշանին:

Ծութերորդումն երեւեցաւ սուրբ Գրիգորի լուսաւորչին,
Կամսր կապեալ էր ամպեղէն Խաչն ՚ի վերաց էր լուսեղէն:
Մեք ՚ի յայն փայտն եմք յուսացեալ՝ յոր Տէր Յիսուս բեւեռեցաւ,
Եւ խոնարհեալ երկրպագեմք աստուածընկալ սուրբ նշանին:

Յիններորդումն երեւեցաւ Խաչն ՚ի լերինըն Զիթենեաց,
Պայծառացեալ ՚ի Գողգոթամ՝ ՚ի սուրբ Քաղաքն Երուսաղէմ:
Մեք ՚ի յայն փայտն եմք յուսացեալ՝ յոր Տէր Յիսուս բեւեռեցաւ,
Եւ խոնարհեալ երկրպագեմք աստուածընկալ սուրբ նշանին:

Ի տասներորդում երեւի Խաչն լուսով հրաշալի,
Քրիստոնէից պարծանք յայտնի, ուրացովաց կոծօղ լինի:
Եօթնապայծառ լուսով փայլի, եկեալ ՚ի Գողգոթա կանգնի,
Ցամէն ազգաց երկրպագի յարածգական յաւիտենի:

(8) Կէտագրեալ տողերը ինչպես յայտնի է, երկրորդ երեւումը կոմը օրինակը ցոյց տուած պիտի լինի բանասեղծ հեղինակը, բայց գմբաղդաբար մեր ձեռքն եղած բոլոր օրինակներն աւ մէրի ունեին: Հեղինակը, եթէ չեմք միացիր, չորբատասներուդ դարուն մէջ ծաղկեալ վարդապետոց ուսումնական գատուն կը վերաբերի: